ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ
ՓՐԱՅՎԻԹ & ԻՆՎԵՍՏՄԸՆԹ ԲԵՆՔԻՆԳ

ARMSWISSBANK
PRIVATE & INVESTMENT BANKING



# ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

# ANNUAL REPORT

# 2018

Տարեկան հաշվետվություն

# 2018

Annual Report

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

# CONTENT


| | | | |
|---|---|---|---|
| ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ | 1 | 6-12 | MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR |
| ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ ԵՎ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ | 2 | 13-18 | MAIN INDICATORS AND ACHIEVMENTS |
| ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ | 3 | 19-28 | LENDING |
| ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ | 4 | 29-34 | FACTORING AND TRADE FINANCE INSTRUMENTS |
| ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ | 5 | 35-42 | INVESTMENT SERVICES |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ | 6 | 43-48 | FINANCIAL OUTCOMES |
| ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ | | 49-67 | FINANCIAL STATEMENTS AND INDEPENDENT AUDITOR'S REPORT |
| ՕԳՏԱԿԱՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ | 7 | 68-72 | USEFUL INFORMATION ABOUT BANK |

# 1 ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ

# MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR



Հարգելի հաճախորդներ, գործընկերներ, աշխատակիցներ և բաժնետերեր

2018 թվականին Բանկը տպավորիչ արդյունքներ է գրանցել ինչպես դրական

Dear customers, partners, employees and shareholders

The Bank has achieved success in terms of recording positive financial results, as well

ֆինանսական ցուցանիշներ արձանագրելու, այնպես էլ չափազանց մրցակցային միջավայրի պայմաններում Բանկի դիրքի ամրապնդման և զարգացման առումով:

2018 թվականին Բանկն ապահովել է շուրջ 5.05 մլրդ ՀՀ դրամի զուտ շահույթ: Վերջինս նախորդ տարվա նույն ցուցանիշը գերազանցել է շուրջ 38%-ով: Գործող 17 առևտրային բանկերի թվում Բանկը շահույթի մեծությամբ պահպանել է 6-րդ տեղը՝ ապահովելով ՀՀ բանկային համակարգի ընդհանուր շահույթի շուրջ 8.5%-ը: ROA և ROE ցուցանիշներով ՀՀ բանկային համակարգում Բանկը նույնպես առաջինների շարքերում է: Ավելին, 2018թ-ի գործունեության արդյունքներով մեկ աշխատողին բաժին ընկնող հասույթի և զուտ շահույթի ցուցանիշների գծով Բանկը շարունակել է պահպանել համակարգում իր առաջատար դիրքերը:

2018թ-ի գործունեության դրական արդյունքների մասին են խոսում Բանկին տրված մրցանակներն ու տիտղոսները, մասնավորապես՝

as strengthening and further developing the position of the Bank in an extremely competitive environment.

In 2018 the Bank provided around 5.05 billion net profit, which exceeded the previous year's same indicator by 38%. In terms of profit volume the Bank maintained its 6th rank amongst the 17 commercial banks in Armenia; generating around 8.5 % of the total profit of the Armenian banking system. The Bank occupies leading positions also in sense of the ROA and ROE indicators. Furthermore, as a result of 2018 activities, considering the indicators of both the net profit and income per employee the Bank maintained its leading position in the banking system.

The accolades and titles given to the Bank attest the positive outcomes of the 2018 performance, particularly;

Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկի (ՎԶԵԲ) կողմից Բանկն արժանացել է «2018թ-ի Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» պատվավոր մրցանակին,




“European Bank of Reconstruction and Development” (EBRD) has awarded the Bank with the prestigious award “2018 Most Active Issuing Bank in Armenia.”

Global Banking & Finance Review հեղինակավոր ամսագիրը Բանկին ճանաչել է 2018թ-ի Հայաստանի առևտրի ֆինանսավորման լավագույն բանկ,




The Global Banking & Finance Review renowned magazine has recognized the Bank as “The Best Trade Finance Bank of Armenia in 2018”.

Ֆրոնթքլիըր (Frontclear) ընկերության կողմից Բանկին շնորհվել է մրցանակ ՎԶԵԲ-ի հետ Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA) շրջանակներում 6.6 մլրդ ՀՀ դրամի (13.5մլն դոլար) ռեպո գործարքների իրականացման համար:




Frontclear has awarded the Bank an accolade for carrying out AMD 6.6 billion (USD 13.5 million) worth repo transactions within the framework of the Global General Repo Agreement (GMRA) with EBRD.

Չնայած մրցակցության սուր միջավայրին՝ Բանկի Խորհրդի, կառավարման մարմինների և աշխատակիցների ջանքերի ու հաճախորդներին միտված մոտեցումների շնորհիվ հնարավոր է դարձել պահպանել Բանկի ծառայությունների մրցակցային պայմանները և ներգրավել նոր հաճախորդներ: Հաճախորդների հետ մեր ամենօրյա աշխատանքի արդյունքում պարբերաբար վերանայել ենք մեր ծառայությունների պայմանները՝ առավելագույնս բավարարելով հաճախորդների պահանջմունքները:

Բանկը շարունակել և խորացրել է

Despite the fierce competition in the banking system, and thanks to the efforts of the Bank's Board, governing bodies, staff, and customer-oriented approaches, it has become possible to maintain the Bank's services with competitive terms and attracting new customers. The day-to-day work with our customers has made it possible to periodically review the offered products' terms, by meeting our customer's needs maximally.

The Bank has continued and deepened relationship with its partners; with the emphasis of providing the customers with

հարաբերությունները գործընկերների հետ, հաճախորդներին տարբեր գործիքներով ֆինանսավորելու նպատակով, մասնավորապես՝

a wide range of financial instruments. particularly,

| | | |
|---|---|---|
| Վերակառուցման և զարգացման եվրոպական բանկ<br>European Bank for Reconstruction and Development | Ասիական զարգացման բանկ<br>Asian Development Bank | Ֆակտորինգային կազմակեր-պությունների միջազգային ցանց<br>Factors Chain International |

| | |
|---|---|
| Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն<br>Export Insurance Agency of Armenia | Գերմանահայկական հիմնադրամ<br>German-Armenian Fund |
| Ազգային հիփոթեքային ընկերություն<br>National Mortgage Company | Բնակարան երիտասարդներին<br>Home For Youth |

Բանկը շարունակել է իր ակտիվ ներդրումային գործունեությունը՝ պահպանելով պետական պարտատոմսերի շուկայի գործակալի կարգավիճակը և հանդես գալով որպես իր հաճախորդների կողմից թողարկվող արժեթղթերի մարքեթ-մեյքեր: Բանկային համակարգում Բանկն արժեթղթերի պորտֆելի ծավալով զբաղեցնում է 1-ին հորիզոնականը:

The Bank has carried on its effective investment activity by maintaining its status as State Bonds' market's agent and acting as the market-maker of securities issued by its customers. The Bank ranks the 1st in the banking system in terms of its securities' portfolio volume.

ԲԱՆԿԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՈՒՂԵՐՁԸ
MESSAGE OF THE BANK'S EXECUTIVE DIRECTOR

Լրացուցիչ միջոցների ներգրավման նպատակով Բանկը 2018թ-ի ընթացքում իրականացրել է պարտատոմսերի լրացուցիչ 3 թողարկումներ, որոնց արդյունքում ներգրավվել է ավելի քան 10.5 մլրդ ՀՀ դրամի երկարաժամկետ ֆինանսական միջոցներ: Վերջիններս 2018 թվականին ցուցակվել են և շրջանառվում են Հայաստանի ֆոնդային բորսայում:

For the purpose of attracting additional funds the Bank has issued 3 more tranches of bonds during 2018, as a result of which we have attracted more than AMD 10.5 billion long-term financial funds. Those bonds were listed in the Armenian Stock Exchange in 2018.

Պարտատոմսերի լրացուցիչ 3 թողարկումներ

3 more tranches of bonds

**Ներգրավվել է ավելի քան 10.5 մլրդ ՀՀ դրամի երկարաժամկետ ֆինանսական միջոցներ**

**Attracted more than AMD 10.5 billion long-term financial funds**

Բանկն առանձնակի ուշադրություն է դարձրել ֆինանսական շուկայում բանկերի, վարկային կազմակերպությունների, կենսաթոշակային ակտիվների կառավարիչների, ապահովագրական ու ներդրումային ընկերությունների համար որպես միջնորդ օղակ ծառայությունների մատուցմանը՝ առաջարկելով նրանց ծառայություններ ինչպես ՀՀ, այնպես էլ միջազգային ֆինանսական շուկաներում հնարավորություն ընձեռելով ներդրումներ կատարելու տարբեր ֆինանսական գործիքներում:

The Bank devoted special attention to its role in the Financial Market as intermediary provider for banks, non-bank financial institutions, pension funds' managers, and insurance and investment companies; through offering various products in both RA and international financial markets, enabling investments in various financial instruments.

We will continue to work relentlessly with the same enthusiasm and determination, staying true to our principles and pursuing our

Մենք շարունակելու ենք աշխատել նույն եռանդով և վճռականությամբ՝ հավատարիմ մնալով մեր սկզբունքներին ու հետամուտ լինելով հաջորդ տարիների մեր ռազմավարական նպատակների իրագործմանը:

Բանկի անձնակազմի անունից իմ խորին շնորհակալությունն եմ հայտնում մեր Հաճախորդներին, Գործընկերներին, Խորհրդին և Բաժնետերերին՝ Բանկին ցուցաբերած վստահության, աջակցության և փոխշահավետ համագործակցության համար:

Միաժամանակ հայտնում եմ իմ երախտագիտությունը Բանկի անձնակազմին՝ պրոֆեսիոնալ և նվիրված աշխատանքի համար:

strategic objectives in the forthcoming years.

On behalf of the Bank staff, I would like to express my sincere gratitude towards our Customers, Partners, Board Members and Shareholders, for their trust and mutual beneficial cooperation.

I would like to also express my gratitude to the staff of ARMSWISSBANK as well, for their demonstrated professionalism and dedicated commitment.

**Գևորգ Մաչանյան**

Տնօրինության նախագահ
Գործադիր տնօրեն

**Gevorg Machanyan**

Chairman of Board Management
Executive Director

2

# ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇ-ՆԵՐ, ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ

# MAIN INDICATORS, ACHIEVEMENTS AND CLIENTS

ՀԻՄՆԱԿԱՆ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ, ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐ
MAIN INDICATORS, ACHIEVEMENTS AND CLIENTS

## Ընդհանուր ցուցանիշներ (մլն ՀՀ դրամ) Main Indicators (AMD Million)

### Ընդհանուր ակտիվներ
### Total Assets




### Վարկային պորտֆել (ներառյալ ֆակտորինգ)
### Loan Portfolio (including factoring)




### Արժեթղթերի պորտֆել
### Securities Portfolio




### Ընդհանուր պարտավորություններ
### Total Liabilities




### Ավանդային պորտֆել
### Deposit Portfolio




### Թողարկված պարտատոմսերի պորտֆել
### Portfolio of Issued Bonds




### Սեփական կապիտալ
### Equity Capital




### Շահույթ
### Profit




## Այլ ցուցանիշներ Other Indicators

### Աշխատակիցներ (միջին տարեկան)
### Employees (average annual)




### Հաճախորդներ
### Customers




## Գործակիցներ Ratios

### ROA




### ROE




### Մեկ աշխատակցին բաժին ընկնող հասույթ (մլն ՀՀ դրամ)
### Income per one employee (AMD Million)




### Մեկ աշխատակցին բաժին ընկնող շահույթ (մլն ՀՀ դրամ)
### Profit per one employee (AMD Million)



## Ձեռքբերումներ

2018թ-ին տեղի են ունեցել Բանկի համար մի շարք կարևոր իրադարձություններ, մասնավորապես.

- Առևտրի ֆինանսավորման ոլորտում գրանցած արդյունքներով ՎԶԵԲ-ի կողմից Բանկն արժանացել է «2018թ-ի Ամենաակտիվ թողարկող բանկը Հայաստանում» պատվավոր մրցանակին: Ավելին, ներմուծման ու արտահանման համար տրամադրվող կարճաժամկետ վարկերի պորտֆելն ավելացնելու նպատակով 2018թ-ին ՎԶԵԲ-ը 3 մլն ԱՄՆ դոլարով ավելացրել է վերականգնվող վարկային գծի սահմանաչափը՝ 9 մլն ԱՄՆ դոլարից հասցնելով 12 մլն ԱՄՆ դոլարի:
- Բանկը ճանաչվել է աշխարհի 200 երկրում ավելի քան 47 000 բաժանորդ ունեցող Global Banking & Finance Review հեղինակավոր ամսագրի կողմից «2018թ-ի Հայաստանի առևտրի ֆինանսավորման լավագույն բանկ»:
- Բանկն առաջին անգամ Հայաստանի բանկային համակարգում ՎԶԵԲ-ի հետ համատեղ և Frontclear կազմակերպության երաշխավորությամբ կնքել է պետական պարտատոմսերով 2.3 մլրդ ՀՀ դրամ ծավալով ռեպո պայմանագիր՝ Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի (ICMA) կողմից ընդունված և միջազգային ֆինանսական շուկաներում արժեթղթերով ռեպո գործարքների կնքման գործընթացը կարգավորող Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA) շրջանակում: Արդյունքում, 2019թ-ի հունվարին ֆինանսական շուկաների զարգացման ոլորտում մասնագիտացված հոլանդական հանրաճանաչ Ֆրոնթքլիըր (Frontclear) ընկերության կողմից Բանկին շնորհվել է մրցանակ՝ ՎԶԵԲ-ի հետ Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA) շրջանակներում 6.6 մլրդ ՀՀ դրամի (13.5 մլն դոլար) ռեպո գործարքների իրականացման համար:
- Բանկը ԳԱՖ Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորման ծրագրի շրջանակում ակտիվորեն ֆինանսավորել է իրավաբանական անձ հանդիսացող հաճախորդների թվով 8 արևային կայանների տեղադրման նախագծեր:
- Բանկը միացել է Հայաստանում ժամանակակից տեխնոլոգիաներով մշակվող ինտենսիվ պտղատու այգիների հիմնման, կարկտապաշտպան ցանցերի և կաթիլային ոռոգման համակարգերի ներդրման համար տրամադրվող վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրին, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետությունում ագրոպարենային ոլորտի սարքավորումների ֆինանսական վարձակալության՝ լիզինգի պետական աջակցության» ծրագրին:
- Սոցիալական պատասխանատվության միջոցառումների շրջանակում Բանկը շարունակել է ակտիվ մասնակցություն ցուցաբերել մշակութային, սոցիալական, կրթական բնույթի մի շարք միջոցառումների ֆինանսավորման գործում:

## Achievements

2018 was significant with an array of important events, particularly;

- EBRD has awarded the Bank with "Most Active Issuing Bank in Armenia in 2018" prestigious award for the bank's outstanding achievements in trade finance sector. Moreover, EBRD has increased its revolving credit limit by USD 3 million in order to increase the portfolio of short-term loans for imports and exports in 2018, raising it from USD 9 million to USD 12 million.
- The Bank has been recognized as "The Best Trade Finance Bank of Armenia in 2018" by the Global Banking & Finance Review leading magazine.
- The Bank and EBRD have signed a joint repurchase agreement in government bonds worth AMD 2.3 billion which was the first in the Banking System of Armenia, under the guarantee of "Frontclear" and within the framework of the Global General Repo Agreement (GMRA) regulating the process of repo transactions with securities in international financial markets and adhering to the International Association of Capital Markets (ICMA). As a result, in January 2019, the Bank was awarded by the renowned Dutch company "Frontclear" which specializes in the development of financial markets, for realizing repurchase agreements worth AMD 6.6 billion (USD 13.5 million) by collaborating with EBRD within the framework of the Global General Repo Agreement (GMRA).
- The Bank has actively funded legal entities for the installation of 8 solar power stations, as part of the GAF "Renewable Energy Development" financing program.
- The Bank has joined the program of subsidizing interest rates for investment in creating intensive orchard gardens, hail-proof networks and drip irrigation systems in Armenia, as well as the "Financial leasing of agricultural equipment in the Republic of Armenia, state leasing support" program.
- The Bank continued its active participation in taking measures in respect of social responsibility by financing a number of cultural, social and educational activities throughout the year.

## Հաճախորդներ

Հաճախորդների սպասարկումը Բանկի կառավարման մարմինների և աշխատակազմի կողմից մշտապես արժանացել է առանձնահատուկ ուշադրության: Տվյալ մոտեցումը համահունչ է Բանկի որդեգրած արժեքներին, իսկ նպատակն է ապահովել հաճախորդների ամբողջական բարձրակարգ սպասարկում` ցուցաբերելով յուրաքանչյուր հաճախորդին անհատական մոտեցում:

- 31.12.2018թ-ի դրությամբ հաճախորդների թվաքանակը կազմել է 2707, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ աճել է 19%-ով:
- 31.12.2018թ-ի դրությամբ իրավաբանական և ֆիզիկական անձ հաճախորդների տեսակարար կշիռը կազմել է համապատասխանաբար 35% և 65%:
- 2018թ-ին Բանկը սկսել է հաճախորդների համար թողարկել և սպասարկել MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business, ինչպես նաև ArCa պլաստիկ քարտեր: Թեպետ քարտերի թողարկումը և սպասարկումը Բանկի համար չի հանդիսանում ռազմավարական բիզնես ուղղություն, սակայն նշված ծառայությունների մատուցումը պայմանավորված է հաճախորդների համալիր ծառայությունների ապահովման անհրաժեշտությամբ:

## Clients

The Bank's management highly values the importance of delivering quality customer services, and this policy pursued by the Bank is based on its issues and values designed to provide full range of adequate customer support by adopting individual approach. In the result we have the following numerical picture:

- By 31.12.2018 the number of clients reached 2707, which increased by 19% compared to last year's corresponding period.
- By 31.12.2018 the rate of legal and natural entities was 35% and 65% respectively.
- In 2018, the Bank has released and served the plastic cards MasterCard Standard, MasterCard Gold, MasterCard Business, as well as ArCa. Though the card issuance and service is not a part of the strategic business trend for the Bank, but the provision of these services is conditioned by the necessity to provide comprehensive customer service.

3

# ՎԱՐԿԱՎՈՐՈՒՄ

Բանկի 2018 թվականի վարկային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները.

# LENDING

The main indicators and events characterizing the Bank's lending activity in 2018.

## Վարկային գործիքներ և վարկային պորտֆել

## Credit instruments and credit portfolio

- Բանկը շարունակել է առաջարկել կորպորատիվ բանկային ծառայությունների լայն փաթեթ.

- The Bank continued offering a wide range of corporate banking services:

- Վարկեր / Loans
- Վարկային գծեր / Lines of credit
- Օվերդրաֆտներ / Overdraft
- Բանկային երաշխիքներ / Bank guarantees
- Ակրեդիտիվներ / Letters of credit
- Գնման պատվերի ֆինանսավորում / Purchase order financing
- Արտահանման խթանման ֆինանսավորում / Export financing
- Նախագծային ֆինանսավորում / Project financing
- Ֆակտորինգ / Factoring
- Այլ ծառայություններ / Other services

Հաճախ, ելնելով հաճախորդի անհատական պահանջմունքներից, Բանկը կարող է միաժամանակ համակցել մի քանի վարկային գործիքներ կամ նախապես նախատեսել փոխարինել վարկային մեկ ծայառությունը մյուսով՝ ելնելով նպատակից, ժամկետայնությունից, մարման աղբյուրից և այլն: Նշված գործելաոճի կիրառումը հնարավորություն է ընձեռնում հաճախորդին ստանալ առավել ճկուն և մատչելի պայմաններով ֆինանսական լուծումներ:

Often, based on the customer's individual needs, the Bank simultaneously combines several credit instruments or provides a replacement for one with others, based on the maturity of the instruments, the purpose, the repayment source, and so on. The use of the mentioned instruments enables the Bank to finance the customer with more affordable and convenient terms.





- Բանկը կապիտալ ներդրումների, էներգաարդյունավետության բարձրացման և/կամ շրջանառու միջոցների համալրման նպատակով առաջարկում է միջնաժամկետ կամ երկարաժամկետ ֆինանսավորման գործիքներ, իսկ առևտրի ֆինանսավորման նպատակով՝ հիմնականում կարճաժամկետ ֆինանսավորման գործիքներ:

- The Bank offers medium or long term financing instruments for replenishment of capital investments, energy efficiency and / or working capital, as well as short-term financing instruments for trade finance, etc.

- Լրացուցիչ աշխատանքներ են տարվել նոր վարկատեսակների մշակման ու ներդրման ուղղությամբ: Մասնավորապես, ներդրվել և հաճախորդներին են առաջարկվել պահեստում գտնվող ապրանքների կոշտ գրավով և կազմակերպության ապրանքանշանի (բրենդի) արժեքի ապահովությամբ վարկային պրոդուկտներ:

- The Bank continued the development and implementation of new lending products, in particular, introducing the lending option by the possibility of firm pledge of products available in reserves, as well as by pledge of brand value.

- Մասնագիտացված չլինելով մանրածախ բանկային ծառայությունների շուկայում՝ Բանկն առանձնակի հետաքրքրություն ունի հիփոթեքային վարկավորման ոլորտում, որտեղ տարիներ շարունակ արձանագրել է կայուն աճի տեմպեր: Մասնավորապես՝ 2018թ-ին վերջին հիփոթեքային վարկերի պորտֆելը կազմել է 7.95 մլրդ ՀՀ դրամ և նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատությամբ աճել է շուրջ 25%-ով: Բացի

- Without specialization in the retail banking, the Bank is particularly interested in mortgage lending, where it has recorded steady growth rates for years. Particularly, the portfolio of mortgage loans at the end of 2018 amounted to AMD 7.95 billion, an increase of 25% over the same period last year. In addition to fixed interest rates of mortgage loans, mortgage credit instruments with a floating interest rate

ֆիքսված տոկոսադրույքով տրամադրվող հիփոթեքային վարկերից, 2018թ-ից Բանկը հաճախորդներին առաջարկում է փոփոխական տոկոսադրույքով մինչև 20 տարի մարման ժամկետով հիփոթեքային վարկային գործիքներ:

(up to 20 years maturity) have also been introduced.

| Հիփոթեքային վարկերի պորտֆել | Mortgage loan portfolio |
|---|---|
| 2017 | 6.35 մլրդ ՀՀ դրամ / bln AMD |
| 2018 | 7.95 մլրդ ՀՀ դրամ / bln AMD |
| Աճել է ավելի քան 25%-ով | Increased by up to 25% |

- Վարկային ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուր են հանդիսանում ինչպես Բանկի սեփական ռեսուրսները, այնպես էլ միջազգային ու տեղական ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցները: Բանկն առանձնահատուկ ուշադրություն է դարձնում միջազգային ու տեղական ֆինանսական կազմակերպությունների հետ համագործակցությանը: Տարեվերջի դրությամբ ներգրավված ծրագրային միջոցների մասնաբաժինն ընդհանուր վարկային ներդրումներում կազմել է շուրջ 11.8%:

- The main sources of the Bank's credit portfolio are the Bank's own resources, which are followed by different attracted funds. The collaboration with local and international financial organizations is of strategic importance for the Bank. By the end of the year, the share of attracted funds in total credit investments were equaled about 11.8%.

- Խոսելով տեղական և միջազգային ֆինանսական կազմակերպությունների մասին, ցանկալի է առանձնացնել մեր հետևյալ գործընկերներին, որոնց հետ Բանկը համագործակցել է.

- Speaking about local and international financial organizations, it is worth highlighting the following partners:





| | | |
|---|---|---|
| ՎԶԵԲ-ի հետ՝ ՓՄՁ վարկավորման, Առևտրի ֆինանսավորման ծրագրերի և Կապիտալի շուկաների միջազգային ասոցիացիայի (ICMA) կողմից ընդունված և միջազգային ֆինանսական շուկաներում արժեթղթերով ռեպո գործարքների կնքման գործընթացը կարգավորող Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA) շրջանակներում, | European Bank for Reconstruction and Development | EBRD – SME lending within the framework of trade financing programs and the Global General Repo Agreement (GMRA) regulating the process of repo transactions with securities in international financial markets, adopted by the International Association of Capital Markets (ICMA). |
| ԳՀՖ-ի հետ՝ Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորման ծրագրի շրջանակում, | GAF | GAF, within the framework of "Renewable Energy Development" financing program. |
| ԱԶԲ-ի հետ՝ Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակում, | ADB Asian Development Bank | ADB within the framework of trade financing programs. |
| Ազգային հիփոթեքային ընկերություն ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման, էներգաարդյունավետ վերանորոգման վարկերի և բնակարանային միկրովարկերի ծրագրերի շրջանակներում, | NMC Ազգային Հիփոթեքային Ընկերություն | National Mortgage Company RCO CJSC, in the framework of refinancing mortgage loans, energy-efficient repair loans and housing micro-credit programs. |
| Բնակարան երիտասարդներին ՎՎԿ ՓԲԸ-ի հետ՝ հիփոթեքային վարկերի վերաֆինանսավորման ծրագրի շրջանակում: | ԲՆԱԿԱՐԱՆ ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐԻՆ | Home for Youth RCO CJSC within the framework of refinancing mortgage loan programs. |

- 2018թ-ը հատկանշական է եղել ԳՀՀ-ի Վերականգնվող էներգիայի զարգացման ֆինանսավորման ծրագրի շրջանակում Բանկի արձանագրած արդյունքները, մասնավորապես՝ Բանկի կողմից ֆինանսավորվել են շուրջ 513.3 մլն ՀՀ դրամ ծավալով 8 արևային կայանների տեղադրման նախագծեր՝ հաճախորդների սեփական կարիքների համար էլեկտրաէներգիա արտադրելու նպատակով: Հայաստանում արևային կայանների միջոցով էներգիայի արտադրության ոլորտը ներկայումս ունի զարգացման մեծ պոտենցիալ: Հանդիսանալով Բանկի վարկավորման առանցքային ուղղություններից մեկը, Բանկը շարունակում է առանձնակի ուշադրություն դաձնել այս ոլորտին՝ հետագա տարիներին առավել մեծ ծավալի ֆինանսավորում ապահովելու համար: 2018թ-ին Բանկը բանակցել է ՎԶԵԲ-ի հետ էներգաարդյունավետության և վերականգնվող էներգիայի նպատակով լրացուցիչ վարկային միջոցների ներգրավման ուղղությամբ, որի արդյունքում ՎԶԵԲ-ի և Բանկի միջև 2019 թվականի փետրվարին GCF-GEFF Armenia էներգաարդյունավետության ծրագրերի շրջանակներում կնքվել է 2.5 մլն. եվրո գումարի չափով վարկային պայմանագիր: Բացի այդ, Բանկը 2018թ-ի նոյեմբերի 14-16-ին հանդես է եկել որպես Երևանում անցկացվող «Հայաստանի էներգետիկայի շաբաթ 2018» ներդրումային համաժողովի գործընկեր: Հանդիսանալով տվյալ բնագավառի առաջատարներից, Բանկը շարունակելու է գործուն քայլեր ձեռնարկել Հայաստանում արևային էներգիայի զարգացման և էներգաարդյունավետության բարձրացման ուղղությամբ, քանի որ այն ունի ռազմավարական նշանակություն և զարգացման մեծ պոտենցիալ:

- 2018 was remarkable for the results of the Bank's performance in respect of German Armenian fund Renewable Energy Development Financing Program, in particular, the Bank funded 8 projects of solar power plants installation, generating electricity for customers' own needs amounting AMD 513.3 million, which significantly reduced electricity costs and improved productivity. The energy production by solar plants installation currently has a big development potential in Armenia. It is worth mentioning that in 2018, the Bank negotiated with the EBRD on additional funds for energy efficiency and renewable energy sources, as a result of which the EBRD and the Bank signed a EUR 2.5 million loan agreement in February 2019 within the GCF-GEFF Armenia Energy Efficiency Program. Moreover, the Bank has partnered with the "Armenia Energy Week 2018" investment forum held in Yerevan on November 14-16, 2018. Being one of the leaders in the field, the Bank will continue to undertake effective steps for the development of solar energy in Armenia, as it has a strategic significance and great potential for development.




| | |
|---|---|
| 8 արևային կայաններ | 8 solar power stations |
| 513.3 մլն ՀՀ դրամ | AMD 513.3 million drams |

- Բանկը 2018թ-ին նաև աշխատանքներ է տարել ՎԶԵԲ-ի և այլ միջազգային կազմակերպությունների հետ ՓՄՁ վարկավորման լրացուցիչ ֆինանսական ռեսուրսների ներգրավման ուղղությամբ, որոնց վերաբերյալ տեսանելի արդյունքներ են գրանցվել 2019թ-ին: Մասնավորապես՝ Բանկը ՓՄՁ վարկավորման ծրագրի շրջանակներում կնքել է նոր վարկային պայմանագիր 7.5 մլն եվրո ծավալով:

- In 2018, the Bank has also worked with the EBRD and other international organizations to invest additional financial resources for SME lending with conspicuous outcomes reflected in 2019 achievments. Particularly, within the framework of SME lending program, the Bank has signed a new lending agreement worth EUR 7.5 million.

**Վարկային պորտֆել / Loan Portfolio**

| Year | Value |
|---|---|
| 2017 | 61.2 մլրդ ՀՀ դրամ / bln AMD |
| 2018 | 71.4 մլրդ ՀՀ դրամ / bln AMD |

**Աճել է ավելի քան 16.5%-ով** / **Increased by up to 16.5%**

**Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտներ / Interest income from credit investments**

| Year | Value |
|---|---|
| 2017 | 5.9 մլրդ ՀՀ դրամ / bln AMD |
| 2018 | 6.5 մլրդ ՀՀ դրամ / bln AMD |

**Աճել է ավելի քան 10.2%-ով** / **Increased by up to 10.2%**

- Տարեվերջի դրությամբ վարկային պորտֆելը կազմել է 71.4 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ ժամանակահատվածի նույն ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 16.5%-ով, իսկ վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտները կազմել են 6.5 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի նկատմամբ աճել է շուրջ 10.2%-ով:

- The loan portfolio amounted to AMD 71.4 billion, which exceeds the previous period status by 16.5% and the interest income from credit investments amounted to AMD 6.5 billion, registering an increase of about 10.2% compared to the indicators of the last year's corresponding period.

| Վարկային պորտֆելի ծավալ (մլրդ ՀՀ դրամ) | The volume of loan portfolio (AMD Billion) |
| --- | --- |




| Վարկային ներդրումներից ստացված տոկոսային եկամուտ (մլրդ ՀՀ դրամ) | Interest income from credit investments (AMD Billion) |
| --- | --- |






| Վարկային պորտֆելի կառուցվածքն ըստ արժույթների | Distribution of the loan portfolio by currencies |
| --- | --- |




### Վարկային ռիսկի կառավարում

- Վարկային ռիսկի արդյունավետ կառավարման տեսանկյունից Բանկը մեծ ուշադրություն է դարձնում վարկային պորտֆելի բաշխվածությանն ըստ առանձին ճյուղերի և ոլորտների՝ նվազեցնելով առանձին ճյուղերում վարկերի կենտրոնացումը:

### Credit risk management:

- From the perspective of effective credit risk management, the Bank pays special attention to the diversification of the loan portfolio by separate branches and sectors, reducing the concentration of loans within separate sectors.

| Վարկային պորտֆելի բաշխվածությունն ըստ տնտեսության ճյուղերի | Distribution of the loan portfolio by sectors on economy |
|---|---|






# 4 ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ

# FACTORING AND TRADE FINANCE INSTRUMENTS

## Բանկի 2018 թվականի ֆակտորինգի և առևտրի ֆինանսավորման գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները

## The main indicators and events characterizing the activities of Bank's factoring and trade finance in 2018

- Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկն ունեցել է ՀՀ բանկային համակարգում առաջատար դիրք, և, այդ առումով, 2018թ-ին ևս շարունակել է պահպանել ու զարգացնել իր ծառայությունների ծավալները:
- The Bank has a leading position in the Armenian banking system in the field of trade finance and continued to maintain and develop the scope of the offered services in 2018.

- Հաճախորդներին ֆակտորինգային գործառնությունների և միջազգային առևտրի ֆինանսավորման ծառայությունների շրջանակում Բանկն առաջարկում է ներքին ռեգրեսով ու առանց ռեգրեսի ֆակտորինգ, դեբիտորական պարտքի ֆինանսավորում, նախաարտահանման ֆինանսավորում, արտահանման և ներմուծման ֆակտորինգ (միջազգային ֆակտորինգ), ակրեդիտիվ, ինկասո և միջազգային բանկային երաշխիք:
- Within the framework of factoring and international trade financing services, the Bank offers the clients domestic recourse and non-recourse factoring, receivables' financing, pre-export financing, export and import factoring (international factoring), letters of credit, documentary and international banking guarantee.



- Բանկը համագործակցում է ՎԶԵԲ-ի, ԱԶԲ-ի, ՀԱԱԳ-ի, ինչպես նաև տարբեր երկրների այլ գործընկեր բանկերի հետ, անդամակցում է FCI առաջատար ֆակտորինգային կազմակերպությունների ցանցին: Նման համագործակցությունը Բանկին թույլ է տալիս մատուցել միջազգային լավագույն չափանիշներին համապատասխան ֆակտորինգային և առևտրի ֆինանսավորման ծառայություններ:
- The Bank collaborates with EBRD, ADB and EIA, as well as with other partner banks in different countries, and is a member of the leading factoring companies FCI network. This kind of cooperation enables the Bank to provide factoring and trade financing services that accordance international best standards.





- Կարևորելով ՀՀ արտահանման պոտենցիալի ընդլայնումը և արտահանման ոլորտի ընկերությունների հետ սերտ համագործակցությունը՝ Բանկը 2018թ-ին մասնակցել է «Հայաստանի արտահանման կատալոգ 2017-2018» շնորհանդեսին և հանդես է եկել որպես նախագծի գործընկեր:
- Emphasizing the importance of expanding the export potential of Armenia and close cooperation with exporting companies The Bank took part in the presentation of "Armenia Export Catalog 2017-2018" in 2018 as a project partner.

- Առևտրի ֆինանսավորման ոլորտում Բանկի ամենաակտիվ գործընկերը շարունակում է մնալ ՎԶԵԲ-ը: Հաշվետու ժամանակահատվածում ՎԶԵԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի համար նախատեսված սահմանաչափը 9 մլն ԱՄՆ դոլարից աճել և դարձել է 12 մլն ԱՄՆ դոլար:
- EBRD remains the Bank's most active partner in the trade financing sector. The limit outlined for Trade Finance Program during the reporting year has increased and reached from 9 million to USD 12 million.

- Բանկն ակտիվորեն համագործակցում է ԱԶԲ-ի հետ՝ հատկապես կարճաժամկետ վարկերի վերաֆինանսավորման մասով: ԱԶԲ-ի առևտրի ֆինանսավորման ծրագրի սահմանաչափը տարեվերջի դրությամբ կազմել է 5 մլն ԱՄՆ դոլար:
- The Bank is actively collaborating with ADB, particularly in terms of refinancing of short-term loans. The limit for ADB Trade Finance Program has concluded to USD 5 million by the end of the year.

- Բանկն Առևտրի ֆինանսավորման ծրագրի շրջանակներում իրականացրել է շուրջ 23.2 մլն ԱՄՆ դոլարի չափով ֆինանսավորում, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 25%-ով:
- Within the framework of TFP (Trade Finance Program) the Bank has provided finance in the amount of USD 23.2 million, scoring an increase by 25%, compared with the previous year's indicator.



- Տարեվերջի դրությամբ Բանկի ԱՖԾ-ի պորտֆելը կազմել է 12.7 մլն ԱՄՆ դոլար, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 34%-ով:
- By the end of the year, the Bank's TFP portfolio amounted to USD 12.7 million, scoring an increase by 34%, compared with the previous year's indicator.

- Բանկը թողարկել է 3.3 մլն ԱՄՆ դոլարի չափով ակրեդիտիվ և երաշխիք, որը նախորդ տարվա համեմատությամբ աճել է շուրջ 32%-ով: Տարեվերջին գործող ակրեդիտիվների ծավալը կազմել է շուրջ 346 մլն ՀՀ դրամ:
- The bank has issued USD 3.3 million worth letters of credit and guarantees, which has increased by 32% as compared to last year. At the end of the year the volume of current letters of credit amounted to about AMD 346 million.

- Ֆակտորինգային ընդհանուր պորտֆելը (ներառյալ արտահանման ֆակտորինգը) տարեվերջին կազմել է 5.1 մլրդ ՀՀ դրամ:
- Total factoring limit (including export factoring transactions) amounted to AMD 5.1 billion by the end of the year.

- Բանկը շեշտակի հաջողություններ է գրանցել ֆակտորինգային գործառնությունների ոլորտում և արձանագրել է իր ֆակտորինգային գործունեության պատմության ընթացքում ամենաբարձր արդյունքները: Բանկի ֆակտորինգային գործառնությունների պորտֆելը տարեվերջին կազմել է 3.22 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 73%-ով: Նշված ցուցանիշին Բանկը կարողացել է հասնել գործող հաճախորդների հետ համագործակցության խորացման և նոր հաճախորդների ակտիվ ներգրավման շնորհիվ: 2018 թվականի ընթացքում ներգրավվել է ֆակտորինգային 38 նոր հաճախորդ և 48 նոր դեբիտոր:
- The Bank has registered significant success in its factoring operations, having the highest ever outcomes in its history. The factoring portfolio amounted to AMD 3.22 million at the end of the year; an increase of nearly 73% compared to the previous year's corresponding period. The Bank reached this indicator through conscious efforts to deepen its relationships with the already existent clients and by actively thriving to attract new ones.  In 2018, 38 new factoring clients and 48 new debitors were attracted.



ՖԱԿՏՈՐԻՆԳ ԵՎ ԱՌԵՎՏՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ
FACTORING AND TRADE FINANCE INSTRUMENTS




- Ֆակտորինգային ծառայություններից են օգտվում թեթև և սննդի արդյունաբերության, մեծածախ ու մանրածախ առևտրի, առողջապահության, տրանսպորտի, քիմիական արդյունաբերության, հանքարդյունաբերության, ջերմոցային տնտեսության, տեքստիլ արդյունաբերության և տնտեսության այլ ոլորտներ ներկայացնող ընկերություններ:
- The companies who avail of the Bank's factoring products are those engaged in food industry, wholesale and retail trade, healthcare, transportation, chemicals, mining, greenhouse industry, textile industry and other sectors of the economy.

- Բանկը տարեցտարի հետևողականորեն զարգացրել է արտահանման ֆինանսավորումը՝ աջակցելով հայրենական արտադրողների արտահանման հնարավորությունների զարգացմանը: Հաշվետու տարում իրականացված արտահանման ֆինանսավորման գործարքների ծավալը կազմել է 4.4 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 29%-ով:
- The Bank has consistently developed export financing, through supporting the exporting potential of local producers. The volume of export financing transactions concluded to AMD 4.4 billion, which has grown by 29% compared to the previous year's indicator.

- Տարեվերջի դրությամբ ՀԱԱԳ-ի կողմից ապահովագրված ֆինանսավորումների պորտֆելը կազմել է շուրջ 1.9 մլրդ ՀՀ դրամ, որը նախորդ տարվա նույն ցուցանիշի համեմատ աճել է շուրջ 69%-ով: Բանկը հանդիսացել է ՀԱԱԳ-ի ամենաակտիվ գործընկերը ՀՀ բանկային համակարգում:
- By the end of the year, the finance portfolio insured by EIA has amounted to about AMD 1.9 billion, which means an increase of about 69% compared with the previous year's indicator. The Bank has been the most active partner of EIA in the Armenian banking system.

| Ֆակտորինգային գործարքների տարեկան ծավալները (մլրդ ՀՀ դրամ) | Annual volume of factoring transactions (AMD Billion) |
|---|---|




# 5 ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանկի 2018 թվականի ներդրումային գործունեությունը բնութագրող հիմնական ցուցանիշներն ու իրադարձությունները

# INVESTMENT SERVICES

The main indicators and events characterizing the Bank's investment activity in 2018

## Դիլերային գործունեություն

## Dealing

- Բանկային համակարգում Բանկն արժեթղթերի պորտֆելի ծավալով զբաղեցրել է 1-ին հորիզոնականը:
- The Bank was ranked the first in terms of the securities portfolio volume in the Armenian banking system.

- Արժեթղթերի պորտֆելի տարեվերջյան հաշվեկշռային արժեքը 131.48 մլրդ. ՀՀ դրամ է, իսկ անվանական արժեքը՝ 111.62 մլրդ. ՀՀ դրամ: Արժեթղթերի պորտ-ֆելի շուրջ 94%-ը կազմել են պետական պարտատոմսերը:
- The end-of-year balance-sheet value of the securities' portfolio was AMD 131.48 billion, and the face value AMD 111.62 billion. The government bonds make up 94% of the securities portfolio.

| Արժեթղթերի պորտֆել | Securities Portfolio |
|---|---|



| | | |
|---|---|---|
| Հաշվեկշռային արժեք | 131.48 | մլրդ ՀՀ դրամ bln AMD |
| Անվանական արժեք | 111.62 | մլրդ ՀՀ դրամ bln AMD |

- Արժեթղթերի պորտֆելն աճել է նախորդ տարեվերջի փաստացի ցուցանիշի նկատմամբ 59.2%-ով:
- The volume of securities portfolio has increased by 59.2% as compared to the previous year.

| Արժեթղթերի պորտֆել | Securities Portfolio |
|---|---|



Աճել է 59.2%-ով

Increased by 59.2%

- Բանկի ՀՀ եվրոպարտատոմսերի պորտ-ֆելը կազմել է 17.5 մլն ԱՄՆ դոլար:
- The Bank's Eurobond portfolio amounted to USD 17.5 million.

- Բանկը գնել է 64.2 մլրդ. ՀՀ դրամի ու վաճառել 29.2 մլրդ. ՀՀ դրամի պետական պարտատոմսեր, որից 10.1 մլրդ. ՀՀ դրամի պետական պարտատոմսերը գնել է առաջնային շուկայից, 3.8 մլրդ. ՀՀ դրամի՝ վաճառել է Թողարկողին հետգնման աճուրդների միջոցով:
- The Bank purchased government bonds worth AMD 64.2 billion and sold bond worth AMD 29.2 billion, AMD 10.1 billion of which were bonds bought from the primary market and AMD 3.8 billion are sold to the Issuer through buyback auctions.

- Բանկը կորպորատիվ արժեթղթերով իրականացրել է շուրջ 10.1 մլրդ. ՀՀ դրամի առք ու վաճառքի գործարքներ, որոնցից ավելի քան 8 մլրդ. ՀՀ դրամի գործարքները կատարվել են երկրորդային շուկայում:
- The Bank conducted AMD 10.1 billion worth purchase and sale deals in corporate bonds, from which over AMD 8 billion were made in the secondary market.

- Բանկը ռեպո համաձայնագրերով ներգրավել է 256.5 մլրդ. ՀՀ դրամի և իր հաճախորդներին տրամադրել 23 մլրդ. ՀՀ դրամի դրամական միջոցներ:
- The Bank has attracted funds worth AMD 256.5 billion through repo agreements and has provided to the customers with funds worth AMD 23 billion.

- Բանկի և ՎԶԵԲ-ի միջև ստորագրված Գլոբալ գլխավոր ռեպո համաձայնագրի (GMRA – General Master Repurchase Agreement) շրջանակներում Բանկը արտարժույթով արտահայտված պար-տատոմսերի ապահովությամբ ՎԶԵԲ-ից 31.12.2018թ-ի դրությամբ ներգրավել է շուրջ 4.4 մլրդ ՀՀ դրամ ընդհանուր գումարի չափով և մեկ տարի մարման ժամկետով դրամական միջոցներ:
- Within the framework of the GMRA General Master Repurchase Agreement signed between the Bank and the EBRD, as of 31.12.2018 the Bank has attracted funds from EBRD with the guarantee of bonds in foreign currency, in the total amount of AMD 4.4 billion with one year's maturity as of 31.12.2018.

- Պարտատոմսերի պորտֆելից ստացվել է շուրջ 11.22 մլրդ. ՀՀ դրամի տոկոսային եկամուտ, որից շուրջ 97.5%-ը բաժին է ընկել պետական պարտատոմսերին: Աճը 2017թ-ի համեմատ կազմել է շուրջ 35%:
- The bonds' portfolio has rendered interest income of about AMD 11.22 billion, about 97.5% of which is the government bonds' share. Compared to 2017, there was 35% growth rate.

- Պարտատոմսերի առք ու վաճառքից ստացված զուտ եկամուտը կազմել է շուրջ 1,695.6 մլն ՀՀ դրամ:
- The net income from purchase and sale of bonds amounted to AMD 1,695.6 million..

- Բանկը, որպես գործակալ, երկրորդային շուկայում մշտապես իրականացրել է պետական պարտատոմսերի պարտադիր երկկողմանի գնանշումներ՝ առաջարկելով շուկայի լավագույն գները:
- Պետական պարտատոմսերի գնանշում-ները հրապարակվում են Բանկի ինտերնետային կայքում, Bloomberg և Reuters Eikon համակարգերում բացված Բանկի պաշտոնական էջերում:
- Բանկը ընդլայնել է Շուկա ստեղծող գործառույթների շրջանակը և տարեվերջի դրությամբ հանդիսացել է 13 պարտատոմսի և 1 բաժնետոմսի գծով Շուկա ստեղծող և Ֆոնդային բորսայում ապահովել է արժեթղթերի ամենօրյա գնանշում:

- As an agent the Bank has always performed a mandatory bilateral quotation of government bonds in secondary market; offering the most convenient prices.
- The Government bonds' quotations are posted on the Bank's official website, available in the Bloomberg and Reuters Eikon's Banks' official pages.
- Bank has expanded the scope of market maker operations and as of the end of the year it has been the market maker of 13 bonds and 1 stock, and has provided daily quotations of securities in the Stock Exchange market.

## Բրոքերային, ռեեստրավարման և պահառության գործունեություններ

## Brokerage, registry keeping and Custody services

- Բանկը բրոքերային ծառայությունների շրջանակներում իրականացրել է 31 մլրդ ՀՀ դրամի արժեթղթերի առք/վաճառքի (ներառյալ ֆինանսական ֆյուչերսները) գործառնություններ, որից 23 մլրդ ՀՀ դրամը օտարերկրյա ընկերությունների թողարկած բաժնետոմսերով և ածանցյալ գործիքներով գործառնություններ են:
- Բանկը ռեեստրի վարման պայմանագիր է կնքել 8 թողարկողի հետ (որից 3-ը՝ պարտատոմսերի ռեեստրի վարման գծով), իսկ պահառության պայմանագիր՝ 18 հաշվետիրոջ հետ:

- Within the framework of brokerage services, the Bank has conducted operations on purchase / sale of securities worth AMD 31 billion (inclusive financial futures), AMD 23 billion of which are transactions with shares issued by foreign companies and derivative instruments.
- The Bank has concluded registry keeping agreements with 8 issuers (3 of which are in respect of bonds' registry keeping), and custodial agreement signed with 18 account holders.



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

INVESTMENT SERVICES

- Տարեվերջի դրությամբ Բանկը վարում է 105 թողարկողի կողմից թողարկված արժեթղթերի ռեեստր, այդ թվում՝ 15-ը պարտատոմսերի ռեեստր և 174 հաշվետիրոջ հետ պահառության հաշիվներ:

- By the end of the year, the Bank manages securities registry issued by 105 issuers, including 15 bonds' registry and custody accounts of 174 account holders.



| | | | |
|---|---|---|---|
| 105 | Թողարկող<br>Issuers | 15 | Պարտատոմսերի ռեեստր<br>Bonds' registry |
| 174 | Հաշվետիրոջ հետ պահառության հաշիվներ<br>Custody account holders | | |

## Արժութային և ոսկով գործառնություններ

## Currency and gold transactions

- Բանկը միջբանկային և ներբանկային արտարժութային շուկայում հիմնական փոխարկելի արժույթներով իրականացրել է շուրջ 334 մլրդ ՀՀ դրամի առք ու վաճառքի գործառնություններ:
- Բանկը միջբանկային և ներբանկային շուկայում իրականացրել է ավելի քան 55.2 մլրդ ՀՀ դրամի արտարժութային սվոփ գործառնություններ:
- Բանկն իրականացրել է ոսկու ձուլակտորներով և անկանխիկ ոսկով շուրջ 292 մլն ՀՀ դրամի գործառնություններ:

- The bank has implemented purchase and sale transactions of major exchange currencies in around AMD 334 billion in interbank and intra-bank foreign currency market.
- The Bank has conducted foreign currency swap transactions of more than AMD 55.2 billion in the interbank and intrabank market.
- The bank has carried out transactions in gold bullions and non-cash gold worth AMD 292 million.

## Միջոցների ներգրավմանն ուղղված ներդրումային գործառնություններ

## Funds attracting activities

- Բանկը միջոցների ներգրավման նպատակով իրականացել է պարտատոմսերի 3 տրանշների թողարկում: Մանրամասները ներկայացված են ներքոնշյալ աղյուսակում:

- For the purpose of attracting funds, the Bank has issued 3 tranches of bonds, the details are presented in below-mentioned table.

| 2018թ-ին տեղաբաշխված պարտատոմսերի հիմնական պայմանները / The main terms of issued bonds in 2018 | | | |
|---|---|---|---|
| Թողարկման պայմաններ<br>Term of issuance | SWISB7 | SWISB8 | SWISB9 |
| Թողարկման պայմաններ | ՀՀ դրամ | ԱՄՆ դոլար | ԱՄՆ դոլար |
| Currency | AMD | USD | USD |
| Տեղաբաշխման ծավալ<br>Placement volume | 3,000,000,000 | 6,000,000 | 10,000,000 |
| Ժամկետայնություն | 5 տարի | 7 տարի | 6 տարի |
| Maturity | 5 years | 7 years | 6 years |
| Արժեկտրոնային եկամտաբերություն<br>Coupon yeild | 11.5% | 6.5% | 6% |
| Մարման ժամկետ<br>Repayment date | 24.05.2023 | 23.05.2025 | 22.11.2024 |
| Անվանական արժեք<br>Par Value | 50,000 | 100 | 100 |

Նշված տրանշի պարտատոմսերը ցուցակվել են Հայաստանի ֆոնդային բորսայում և իրականացվում են պարտատոմսերի ամենօրյա երկկողմանի գնանշումներ (մարքեթ մեյքինգ):

The abovementioned tranches of bonds are listed on the Armenian Stock Exchange and daily two-way quotes of bonds are executed (market making).



ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԲԱՆԿԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ
INVESTMENT SERVICES

- 31.12.2018թ-ի դրությամբ Ֆոնդային բորսայի առևտրային հարթակում Բանկն ունի ցուցակված թվով 8 թողարկման պարտատոմս: Ընդ որում, 2018թ-ին Բանկի կողմից մարվել է մեկ թողարկման պարտատոմս՝ 2 մլն ԱՄՆ դոլար անվանական արժեքով:

- As of 31.12.2018, the Bank has 8 issue bonds in the Stock Exchange trading platform. In addition, in 2018, the Bank has repaid one issue bond with par value of USD 2 million.

| 2018թ-ին Ֆոնդային բորսայում պարտատոմսերով կատարված գործարքների վիճակագրություն / Statistics on deals with Bonds in Stock Exchange in 2018 | | | | | |
|---|---|---|---|---|---|
| Բորսայական հապավում | Արժեկտրոն. եկամտաբերություն | Գործարքի միջին գին | Գործարքների քանակ | Պարտատոմսերի քանակ | Ընդհանուր ծավալ (հազար) |
| Stock exchange symbol | Coupon yield | Average price of deals | Number of Deals | Number of bonds | Total value |
| SWISB2 | 8% | 5.4% | 3 | 75 | 78.57 USD |
| SWISB3 | 8.5% | 5.13% | 2 | 33 | 35.49 USD |
| SWISB4 | 6.75% | 6.36% | 15 | 2,642 | 273.36 EURO |
| SWISB5 | 5% | 4.86 % | 21 | 64,140 | 6,554.89 AMD |
| SWISB6 | 12.75% | 11.8 % | 20 | 8,692 | 459,788.84 AMD |
| SWISB7 | 11.5% | 11.09% | 20 | 30,108 | 1,582,395.0 AMD |
| SWISB8 | 6.5% | 6.49% | 35 | 41,712 | 4,270.33 USD |
| SWISB9* | 6.0% | _ | _ | _ | _ |

*Այս թողարկման պարտատոմսերը ցուցակվել են Ֆոնդային բորսայում 26.12.2018թ-ին և որևէ գործարք չի կատարվել:

*These issue of bonds were listed on the Stock Exchange on 26.12.2018 and no deals were made.

| Արժեթղթերի պորտֆելի ծավալը (ՀՀ մլրդ դրամ) | Volume of Bonds' Portfolio (AMD Billion) |
| --- | --- |




| Արժեթղթերի պորտֆելից ստաց- ված եկամուտ (ՀՀ մլրդ դրամ) | Revenue from the bonds' portfolio (AMD Billion) |
| --- | --- |




# 6 ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

# FINANCIAL RESULTS

2018թ-ին Բանկի կողմից ներդրվել է Ֆինանսական հաշվետվությունների կազմման նոր համակարգ, որը հիմնված է Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի կողմից թողարկված «Ֆինանսական գործիքներ» ՖՀՄՍ-9-ով ամրագրված նոր սկզբունքների վրա:

2018թ-ին կատարվել է Բանկի բիզնես մոդելի փոփոխություն, համաձայն որի կատարվել է վաճառքի համար մատչելի հաշվառվող ՊՊ-ների պորտֆելի մի մասի (53.790 հազ. ՀՀ դրամ անվանական արժեքով) վերադասակարգում՝ հաշվառելով որպես ամորտիզացված արժեքով չափվող արժեթղթեր:

Բանկի կողմից ձևավորված զուտ շահույթը հիմնականում պայմանավորված է տոկոսային և ոչ տոկոսային եկամուտների աճով, որը պայմանավորված է Բանկի կողմից մատուցվող ծառայությունների տարեցտարի բազմազանեցման, ակտիվացման և բարելավման գործընթացներով:

In 2018, the Bank introduced a new Financial Reporting Framework based on the new principles set out in IFRS 9 Financial Instruments issued by the International Accounting Standards Board (IFRS).

The Bank's business model was updated in 2018, according to which a part of the Governmental Bonds' portfolio available for sale (with par value of AMD 53.790 thousand) was reclassified; by calculating them as securities measured at amortized cost.

The net profit generated by the Bank is mainly conditioned by the growth of interest and non-interest incomes, which in turn is conditioned by the Bank's versatile, active and constantly developed services offered.



| Բանկի տարեկան շահույթի աճի դինամիկան (ՀՀ մլն դրամ) | Dynamic of the Bank's annual profit growth (mln AMD) |
|---|---|




| Բանկի տարեկան շահութաբերության ցուցանիշները | Dynamic of the Bank's annual profitability ratio |
|---|---|



2018թ-ին Բանկի ակտիվներում շարունակել են գերակշռել ներդրումներն արժեթղթերում (հատկապես՝ պետական պարտատոմսերում), վարկային և ֆակտորինգային գործիքներում տեղաբաշխված միջոցները, որոնք հանդիսանում են Բանկի եկամուտների գոյացման հիմնական աղբյուրները:

In 2018, investments in securities (especially Government Bonds) continued to predominate the in Bank's assets portfolio, credit and factoring instruments, which are key sources for the Bank's revenue generation.

## Ակտիվների կառուցվածքը և դինամիկան / The structure and dynamic of the assets








Բանկը մշտապես կարևորում է պարտավորությունների կազմի և կառուցվածքի դիվերսիֆիկացմանն ու ներգրավվող ռեսուրսների ինքնարժեքի նվազեցմանն ուղղված աշխատանքների իրականացումը՝ շարունակաբար խորացնելով տեղական ու միջազգային ֆինանսական կառույցների հետ առկա համագործակցությունը և աշխատանքներ տանելով ինչպես նոր ֆինանսական կառույցների հետ համագործակցության հաստատման, այնպես էլ ֆինանսական նոր գործիքներով միջոցների ներգրավման ծավալների ավելացման ուղղությամբ:

Պարտավորությունների ժամկետային կառուցվածքի դիվերսիֆիկացման և ինքնարժեքի նվազեցման նպատակով Բանկը շարունակել է ակտիվորեն միջոցներ ներգրավել նաև կորպորատիվ պարտատոմսերի թողարկման ու տեղաբաշխման միջոցով:

The Bank highly values the diversification of the liabilities' structure and the implementation of activities aimed at reducing the cost price of attracted funds; continuously strengthening its cooperation with existent local and international financial institutions and by striving towards establishing cooperation with new financial institutions and increasing the scope of funding by developing new financial instruments.

The Bank actively pursued attracting funds through the issuance and placement of corporate bonds as well, aiming at achieving the diversification of the term structure of the liabilities and to reduce their cost price.

## Պարտավորությունների կառուցվածքը և դինամիկան
## The dynamics and structure of liabilities

| | 2014 | 2015 | 2016 | 2017 | 2018 |
|---|---|---|---|---|---|
| Funds Attracted from Financial Institutions | 47.3% | 31.7% | 30.3% | 20.6% | 26.5% |
| Fund Attracted from Clients | 52.0% | 57.1% | 49.9% | 52.1% | 50.1% |
| Securities Issued by the Bank | 0.7% | 7.3% | 4.8% | 14.1% | 14.5% |
| Subordinate Loans | | 3.6% | 13.2% | 10.7% | 7.1% |
| Other Liabilities | | 0.3% | 1.8% | 2.5% | 1.8% |




Ֆինանսական կազմակերպություններից ներգրավված միջոցներ
Funds Attracted from Financial Institutions

Հաճախորդների կողմից ներգրավված միջոցներ
Fund Attracted from Clients

Բանկի կողմից թողարկված արժեթղթեր
Securities Issued by the Bank

Ստորադաս փոխառություն
Subordinate Loans

Այլ պարտավորություններ
Other Liabilities



# ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՆԿԱԽ ԱՈՒԴԻՏՈՐԻ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերություն

# FINANCIAL STATEMENTS AND INDEPENDENT AUDITOR’S REPORT

“ARMSWISSBANK“ Closed Joint Stock Company

31 դեկտեմբերի December 2018

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Անկախ աուդիտորի եզրակացություն 52

Շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն 60

Ֆինանսական վիճակի մասին հաշվետվություն 62

Սեփական կապիտալում փոփոխությունների մասին հաշվետվություն 64

Դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվություն 66

# CONTENTS

Independent auditor’s report 53

Statement of profit or loss and other comprehensive income 61

Statement of financial position 63

Statement of changes in equity 65

Statement of cash flows 67

**Գրանդ Թորնթոն ՓԲԸ**
ՀՀ, ք. Երևան 0012
Վաղարշյան 8/1
Հ. +374 10 260 964
Ֆ. +374 10 260 961

“ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ” ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ բաժնետիրոջը.

**Կարծիք**

Մենք աուդիտի ենք ենթարկել «ԱՐՄՍՎԻՍԲԱՆԿ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ (Բանկ) ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունը՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ինչպես նաև այդ ամսաթվին ավարտված տարվա շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին հաշվետվությունները, ինչպես նաև ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները, ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականության ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով՝ կից ֆինանսական հաշվետվությունները տալիս են Բանկի՝ 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի և նույն ամսաթվին ավարտված տարվա ֆինանսական արդյունքների ու դրամական հոսքերի ճշմարիտ և իրական պատկերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (ՖՀՄՍ-ներ):

**Կարծիքի հիմքեր**

Մենք աուդիտն անցկացրել ենք աուդիտի միջազգային ստանդարտներին (ԱՄՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը լրացուցիչ նկարագրված է այս եզրակացության՝ «Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար» բաժնում: Մենք անկախ ենք Բանկից՝ համաձայն Հաշվապահների էթիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված «Պրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի» (ՀԷՄՍԽ կանոնագիրք), և պահպանել ենք էթիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԽ կանոնների և Հայաստանի Հանրապետությունում ֆինանսական հաշվետվությունների աուդիտին վերաբերող էթիկայի պահանջների: Մենք համոզված ենք, որ ձեռք ենք բերել բավարար համապատասխան աուդիտորական ապացույցներ՝ մեր կարծիքն արտահայտելու համար:

**Աուդիտի առանցքային հարցեր**

Աուդիտի առանցքային հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դատողության համաձայն, առավել նշանակալի էին ընթացիկ ժամանակաշրջանի ֆինանսական հաշվետվությունների աուդիտի ընթացքում: Այդ հարցերը դիտարկվել են ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համատեքստում՝ որպես մեկ ամբողջություն, և ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ:

**ՖՀՄՍ 9-ի առաջին անգամ կիրառումը**

Հաշվապահական հաշվառման քաղաքականությունների նկարագրությունը ներկայացված է ֆինանսական հաշվետվությունների 4.4 ծանոթագրությունում, իսկ պարտքային ռիսկի վերլուծությունը՝ 36.1 ծանոթագրությունում:

Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհուրդը (ՀՀՄՍԽ) թողարկել է ՖՀՄՍ 9-ը «Ֆինանսական գործիքներ», որը փոխարինում է ՀՀՄՍ 39-ին՝ «Ֆինանսական գործիքներ. ճանաչումը և չափումը»: ՖՀՄՍ 9-ի ներդրման արդյունքում առաջացող հիմնական փոփոխություններն են. Բանկի արժեզրկումից կորուստները ներկայում հիմնված են ակնկալվող կորուստների, այլ ոչ թե փաստացի կորուստների մոդելի վրա, Բանկի ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման փոփոխությունները, որոնք մանրամասն նկարագրված են ֆինանսական հաշվետվություններին կից 4.4 ծանոթագրությունում:

Ինչպես նկարագրված է ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում, ֆինանսական ակտիվները դասակարգվել են, իսկ արժեզրկումից կորուստները հաշվառվել են համաձայն ՖՀՄՍ 9-ի «Ֆինանսական գործիքներ»: Սա համարվում է աուդիտի առանցքային հարց, քանի որ ՖՀՄՍ 9-ը նոր և բարդ հաշվապահական հաշվառման ստանդարտ է, որը պահանջում է էական դատողություններ ֆինանսական ակտիվների դասակարգման, ինչպես նաև արժեզրկման պահուստների որոշման համար:

Դատողությունների առանցքային ոլորտները ներառում են բիզնես մոդելի գնահատումը, որի շրջանակում պահվում են ակտիվները, գնահատումը, թե արդյոք ֆինանսական ակտիվի պայմանագրային դրույթները հիմնավորված են միայն մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների



**Grant Thornton CJSC**
T. +374 10 260 964
F. +374 10 260 961
8/1 Vagharshyan Str.
0012 Yerevan, Armenia



To the shareholder of “ARMSWISSBANK” CLOSED JOINT STOCK COMPANY

**Opinion**

We have audited the financial statements of “ARMSWISSBANK” CLOSED JOINT STOCK COMPANY (the “Bank”), which comprise the statement of financial position as of 31 December 2018, and the statement of profit or loss and other comprehensive income, statement of changes in equity and statement of cash flows for the year then ended, and notes to the financial statements, including a summary of significant accounting policies.

In our opinion, the accompanying financial statements give a true and fair view of the financial position of the Bank as of 31 December 2018 and of its financial performance and its cash flows for the year then ended in accordance with International Financial Reporting Standards (“IFRSs”).

**Basis for Opinion**

We conducted our audit in accordance with International Standards on Auditing (“ISAs”). Our responsibilities under those standards are further described in the Auditor’s Responsibilities for the Audit of the Financial Statements section of our report. We are independent of the Bank in accordance with the International Ethics Standards Board for Accountants’ Code of Ethics for Professional Accountants (the “IESBA Code”) together with the ethical requirements that are relevant to our audit of the financial statements in the Republic of Armenia, and we have fulfilled our other ethical responsibilities in accordance with those ethical requirements. We believe that the audit evidence we have obtained is sufficient and appropriate to provide a basis for our opinion.

**Key Audit Matters**

Key audit matters are those matters that, in our professional judgment, were of most significance in our audit of the financial statements of the current period. These matters were addressed in the context of our audit of the financial statements as a whole, and in forming our opinion thereon, and we do not provide a separate opinion on these matters.

**First time adoption of IFRS 9**

Refer to note 4.4 of the financial statements for a description of the accounting policies and to note 36.1 for an analysis of credit risk.

The International Accounting Standards Board (IASB) issued IFRS 9 – “Financial Instruments” which replaces “IAS 39 – Financial Instruments”. The key changes arising from adoption of IFRS 9 are that the Bank’s impairment losses are now based on expected losses rather than an incurred loss model, and the change in the classifcation and measurement of the Bank’s financial assets and liabilities, which are detailed in Note 4.4 to the financial statements.

As described in the notes to the financial statements, the financial assets have been classified and the impairment losses have been determined in accordance with IFRS 9 Financial Instruments. This was considered a key audit matter as IFRS 9 is a new and complex accounting standard which requires significant judgment to classify the financial assets as well as to determine the impairment reserve.

Key areas of judgment included: the assessment of the business model within which the assets are held, the assessment of whether the contractual terms of the financial asset are solely payments of principal and interest on the principal amount outstanding, the interpretation of the requirements to determine impairment under application of IFRS 9, which is reflected in the Bank’s expected credit loss model, the identification of exposures with a significant deterioration in credit quality, assumptions used in the expected credit loss model such as the financial condition of the counterparty,

վճարումներով, ՖՀՄՍ 9-ի կիրառման ժամանակ արժեզրկման որոշման պահանջների մեկնաբանումը, որը արտացոլվում է Բանկի ակնկալվող պարտքային կորուստների մոդելում, վարկի որակի էական վատթարացման հետ կապված բացահայտումները, նաև ակնկալվող պարտքային կորուստների մոդելում օգտագործված ենթադրությունները, ինչպիսիք են երրորդ կողմի ֆինանսական վիճակը, ակնկալվող ապագա դրամական միջոցների հոսքերն ու կանխատեսվող մակրոտնտեսական գործոնները և լրացուցիչ միջոցներ կիրառելու անհրաժեշտությունը՝արտացոլելու ընթացիկ կամ ապագա արտաքին գործոնները, որոնք, ինչպես հարկն է, չեն արտացոլվել ակնկալվող պարտքային կորուստների մոդելում:

Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների չափման և դասակարգման հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

_ ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա ֆինանսական ակտիվների և պարտավորությունների դասակարգման և չափման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,

_ դիտարկվել և ստուգվել են Բանկի՝ բիզնես մոդելի գնահատումը և պայմանագրային այն դրամական միջոցների հոսքերի թեստավորումը, որոնք առաջացնում են «միայն մայր գումարի և տոկոսների վճարումներ» հանդիսացող դրամական հոսքեր (SPPI թեստ)

_ ստուգվել են սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Արժեզրկման մեթոդոլոգիայի հետ կապված իրականացվել են հետևյալ աուդիտորական ընթացակարգերը.

_ ուսումնասիրվել է Բանկի՝ ՖՀՄՍ 9-ի հիման վրա արժեզրկման պահուստի ձևավորման քաղաքականությունը և համեմատվել է ՖՀՄՍ 9-ի պահանջների հետ,

_ գնահատվել է արժեզրկման պահուստի որոշման ժամանակ օգտագործվող տեղեկատվության վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը, ներառյալ վարկի ձևավորման պահին ստացված գործարքային տվյալները, պարտքային որակի շարունակական ներքին գնահատումները, ակնկալվող պարտքային կորուստների մոդելի տվյալների և ինտերֆեյսի պահպանումը,

_ գնահատվել է ակնկալվող պարտքային կորուստների մոդելի վերահսկողության համապատասխան գործիքների կառուցվածքը և թեստավորվել է դրանց գործառնական արդյունավետությունը, ներառյալ մոդելի կառուցումը և հաստատումը, շարունակական վերահսկումը/հավաստիացումը, մոդելի կառավարումը և թվաբանական ճշգրտությունը,

_ ստուգվել է Բանկի` պարտքային ռիսկի էական աճի որոշման և ռիսկերը տարբեր փուլերում դասակարգելու հիմքերի համապատասխանությունը,

_ որպես ռիսկերի օրինակ՝ ստուգվել է Բանկի փուլավորման ճշտությունը,

_ գնահատվել և թեստավորվել են մոդելավորման էական ենթադրությունները՝ կենտրոնանալով Բանկի կողմից ընդունված մոդելավորման առանցքային ենթադրությունների վրա և պահուստների զգայունությունը մոդելավորման ենթադրությունների փոփոխությունների նկատմամբ,

_ Բանկի ղեկավարության կողմից ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում օգտագործված կանխատեսվող ենթադրությունների հետ կապված քննարկումներ են անցկացվել ղեկավարության հետ, որի ընթացքում ենթադրությունները հաստատվել են՝ օգտագործելով հանրության համար մատչելի տեղեկատվություն,

_ ուսումնասիրվել են ռիսկերի ընտրանքային օրինակներ և իրականացրել ընթացակարգեր` վարկի որակի էական վատթարացման ռիսկերը գնահատելու և անհատական գնահատված ռիսկերի գծով ակնկալվող կորուստների հաշվարկների ժամանակին բացահայտելու նպատակով:

_ ստուգվել են 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ակնկալվող պարտքային կորուստների հաշվարկներում ընդգրկված վարկերի և փոխատվությունների, արտահաշվեկշռային հոդվածների, ներդրումային արժեթղթերի, տեղաբաշխումների և այլ ֆինանսական ակտիվների ամբողջականությունը: Տեսական հիմնավորումները ընդունվել են, իսկ մոդելների մաթեմատիկական ճշտությունը թեստավորվել,

_ արտաքին աղբյուրներից ստացվող տվյալների մասով ընդունվել են նման տվյալների ընտրության գործընթացը, Բանկի համար դրա համապատասխանությունը և նման տվյալների նկատմամբ վերահսկողությունն ու կառավարումը,

_ մեր SS ոլորտի մասնագետները ներգրավվել են հատուկ թեստավորում պահանջող ոլորտներում (օրինակ՝ տվյալների հուսալիություն և ակնկալվող պարտքային կորուստների մոդել),





expected future cash flows and forward looking macroeconomic factors and the need to apply additional overlays to reflect current or future external factors that are not appropriately captured by the expected credit loss model.

With respect to classification and measurement of financial assets and financial liabilities, our audit procedures comprised the following;

- We read the Bank's IFRS 9 based classification and measurement of financial assets and financial liabilities policy and compared it with the requirements of IFRS 9;

- We obtained an understanding and checked the Bank's business model assessment and the test on the contractual cash flows, which give rise to cash flows that are 'solely payments of principal and interest' [SPPI test] performed by the Bank's consultant; and

- We checked the appropriateness of the opening balance adjustments.

With respect to impairment methodology, our audit procedures comprised the following;

- We read the Bank's IFRS 9 based impairment provisioning policy and compared it with the requirements of IFRS 9;

- We assessed the design and tested the operating effectiveness of relevant controls over the data used to determine the impairment reserve, including transactional data captured at loan origination, ongoing internal credit quality assessments, storage of date and interfaces to the expected credit loss model;

- We assessed the design and tested the operating effectiveness of relevant controls over the expected credit loss model, including model build and approval, ongoing monitoring/validation, model governance and mathematical accuracy;

- We checked the appropriateness of the Bank's determination of significant increase in credit risk and the resultant basis for classification of exposures into various stages;

- For a sample of exposures, we checked the appropriateness of the Bank's staging;

- We assessed and tested the material modeling assumptions as well as overlays with a focus on the key modeling assumptions adopted by the Bank and sensitivity of the provisions to changes in modeling assumptions;

- For forward looking assumptions used by the Bank's management in its ECL calculations, we held discussions with management and corroborated the assumptions using publicly available information;

- We examined a sample of exposures and performed procedures to evaluate the timely identification of exposures with a significant deterioration in credit quality and expected loss calculation for exposures assessed on an individual basis;

- We checked the completeness of loans and advances, off balance sheet items, investment securities, placements and other financial assets included in the ECL calculations as of 31 December 2018; We understood the theoretical soundness and tested the mathematical integrity of the Models;

- For data from external sources, we understood the process of choosing such data, its relevance for the Bank, and the controls and governance over such data;

- We involved our IT specialists in areas that required specific expertise (i.e. data reliability and the expected credit loss model);

- We checked the appropriateness of the opening balance adjustments.

We assessed the accuracy of the disclosures in the financial statements.

_ ստուգվել է սկզբնական մնացորդների ճշգրտումների համապատասխանությունը:

Գնահատվել է ֆինանսական հաշվետվություններում բացահայտումների ճշգրտությունը:

**Այլ տեղեկատվություն**

Ղեկավարությունը պատասխանատու է այլ տեղեկատվության համար: Այլ տեղեկատվությունը ներառում է Բանկի տարեկան հաշվետվությունը 2018թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար՝ բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր աուդիտորական եզրակացությունից: Տարեկան հաշվետվությունը ենթադրաբար մեզ կտրամադրվի աուդիտորական եզրակացության ամսաթվից հետո:

Ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք չենք տրամադրում կարծիք, որը որևէ այլ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Մեր կողմից իրականացվող ֆինանսական հաշվետվությունների աուդիտի հետ կապված մեր պարտավորությունն է ծանոթանալ վերոնշյալ այլ տեղեկատվությանը, երբ այն հասանելի լինի մեզ՝ որոշելու համար, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և ֆինանսական հաշվետվությունների կամ աուդիտի ընթացքում ձեռքբերված մեր գիտելիքների միջև, կամ արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

**Ղեկավարության և կառավարման օղակներում ներգրավված անձանց պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների համար**

Ղեկավարությունը պատասխանատու է ՖՀՄՍ-ների համաձայն ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին վերահսկողության համար, որը, ըստ ղեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով էական խեղաթյուրումներից զերծ ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս ղեկավարությունը պատասխանատու է Բանկի՝ անընդհատ գործելու հնարավորությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատության հետ կապված հարցերը բացահայտելու և Բանկի գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ ղեկավարությունը մտադիր է լուծարել Բանկը, ընդհատել դրա գործունեությունը կամ, երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Կառավարման օղակներում ներգրավված անձիք պատասխանատու են Բանկի ֆինանսական հաշվետվությունների կազմման գործընթացը վերահսկելու համար:

**Աուդիտորի պատասխանատվությունը ֆինանսական հաշվետվությունների աուդիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով զերծ են էական խեղաթյուրումներից՝ անկախ դրանց՝ խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող աուդիտորի եզրակացություն: Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ ԱՄՍ-ներին համապատասխան իրականացված աուդիտը միշտ կհայտնաբերի էական խեղաթյուրումը, երբ այն առկա է: Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի արդյունքում և համարվում են էական, երբ խելամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք առանձին կամ միասին վերցրած կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների՝ այդ ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա:

ԱՄՍ-ների համաձայն իրականացրած աուդիտի ողջ ընթացքում մենք կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում ենք մասնագիտական կասկածամտություն: Բացի այդ, մենք.

- Հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով ֆինանսական հաշվետվությունների էական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք աուդիտորական ընթացակարգեր՝ այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում աուդիտորական ապացույցներ, որոնք բավարար ու համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար: Խարդախության հետևանքով առաջացած էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով էական խեղաթյուրման չհայտնաբերման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել





**Other information**

Management is responsible for the other information. The other information comprises the information included in the annual report of the Bank for the year ended 31 December 2018, but does not include the financial statements and our auditor’s report thereon. The annual report is expected to be made available to us after the date of this auditor’s report.

Our opinion on the financial statements does not cover the other information and we will not express any form of assurance conclusion thereon.

In connection with our audit of the financial statements, our responsibility is to read the other information identified above when it becomes available and, in doing so, consider whether the other information is materially inconsistent with the financial statements or our knowledge obtained in the audit, or otherwise appears to be materially misstated.

**Responsibilities of Management and Those Charged with Governance for the Financial Statements**

Management is responsible for the preparation and fair presentation of the financial statements in accordance with IFRSs, and for such internal control as management determines is necessary to enable the preparation of financial statements that are free from material misstatement, whether due to fraud or error.

In preparing the financial statements, management is responsible for assessing the Bank’s ability to continue as a going concern, disclosing, as applicable, matters related to going concern and using the going concern basis of accounting unless management either intends to liquidate the Bank or to cease operations, or has no realistic alternative but to do so.

